

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒՄ, ՄԻԱՅԵ՞Ք

ՀԻՄՆԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր ..

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԶԻԵՐԻ
ԽՆԱՄՔԻ, ՊԱՀՊԱՆՄԱՆ

Յ Ե Վ

ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿՈՎԿԵՄԻ ՅԵՐԿՐՈՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
1933 ԹՎԻ ԸԳԻՒԼԻ 18-Ի ՎՈՐՈՇՈՒԹՅ, ՀԱ-
ՏԵԶՎԱԺ ՅԵՐԿՐՈԽԵՑԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻՑ

636.1
Հ-58

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻНСТИՏՈՒՏԱ
ԲԻՇՈՎԱԴԵԼԻ
Ակադեմիա Խան
СССР

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿՈՎԿԵՄԻ»
ՊՈԽՏԱԳ-ԴՈՒ

1938

СА 429 ДУБЛЕТ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒ

636.1
2-58

ՀԻՄՆԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր . . .

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԶԻԵՐԻ
ԽՆԱՄՔԻ, ՊԱՀՊԱՆՄԱՆ
Յ Ե Կ

ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՅՈՒՄԻԱՅԻՆ ԿԱՎԿԱԾԻ ՅԵՐԿՐՉՈՂԱԾՐՑՈՒԹՅԱՆ
1933 ԹՎԻ ԵՊԲԻԼԻ 18-Ի ՎԱՐԱԾՈՒՄԻ, ՀԱ-
ՏՏՏՎԵՐԸ ՅԵՐԿՐՉՈՂԱԾՅԻՆ ԿԱՄԻՏԵՔԻ ԿՈՂՄԻՑ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ»
ԲՈԽՈՎԿԱ-ԴՐԱՆ, 1933

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПРОСВЕЩЕНИЯ
Академии Наук
СССР

Առաջարկություն

Առաջարկություն	11.06.2013	հջ
Հիմնական և պարտադիր կանոններ կոլանտեսական ձիերի խնամքի, պահպանման և ոգտագործման վե- րաբերյալ	8	
I. Զիապանի և ձիերին ամրացված կոլանտեսականի մասին	9	
II. Զիերի ընդունելը և նրանց աշխատանքի հանձնելը	12	
III. Կերակրելու և ջրելու մասին	13	
IV. Զիերը մաքրելու և նրանց սմբակներն ու բերանը խնամելու մասին	16	
V. Ախոռների և ձիերի դաշտային կացարանների մասին	17	
VI. Զիերին ոգտագործելող կարգը	18	
VII. Անասնաբուժական հակողության մասին	20	
VIII. Քուռակների մասին	21	
IX. Պատասխանատվության մասին	22	

ՀՀ

3201

С—Х

Ответственный редактор А. Г. АВАКЬЯН

Технический редактор Г. М. МАРКАРЬЯН

Статформат Б6 125x176 мм.

Сдано в набор 9/V 1933 г.

Подписано в печать 13/V 1933 г.

Типография им. „Стачки 1902 г.“ СККПТ

в Ростове на-Дону

Уполномоченного № Б 223

Заказ № 2 171 об'ем 3/4 п. л. Тираж 20 000



60847-67

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ծագգրում ենք Հյուսիսային կովկասի Յերկրհող-
վարչության 1933 թվի ապրիլի 18-ի փորոշումը, հաս-
տատված Յերկրցանքային կոմիտեյի կողմից «հիմ-
նական յեվ պարտադիր կանոնները կոլտնտեսային
ձիերի խնամքի, պահպանման և ոգտագործման վերա-
բերյալ», վորը կրկին ու կրկին պիտի լարե բոլոր կուս-
կազմակերպությունների ուշադրությունը, զորաժո-
ղովի բոլոր ազնիվ կոլտնտեսականներին պայքա-
րելու կոլտնտեսային առողջ, ամրակազմ ձիու համար:

Կուսակցությունն ու կառավարությունն անընդ-
հատ շեշտել են, վոր տրակտորի հետ միասին, կոլ-
տնտեսությունների կազմակերպչական ամրությունը
և գարնանացանի հաջողությունը փորոշում ե կոլտն-
տեսային ձին:

Գարնանավարի 60 տոկոսը և գարնանացանի զգա-
լի մասն ընթացիկ տարում դեռևս ընկնում ե կոլ-
տնտեսային ձիւ վրա:

Առանձին կոլտնտեսություններում և ույոննե-
րում ձիու բեռնավորումը հասնում է մինչև 8—10
հեկտար։ Սրանից շատ պարզ յերեվում ե, վոր առանց
առանձնահատուկ ուշադրության և խնամքի կոլտն-
տեսային ձիու վերաբերյալ՝ չի յել կարող լինել և վոչ
մի խոսք աշխատանքի բարձր թափերի, ժամկետերի,
գարնանացանի փորակի և բարձր բերքի մասին, հե-

տևապես և անլուծելի կմնա խնդիրը՝ դարձնել բոլոր
կոլտնեսականներին ունելութեա:

Առանց առողջ, ավագազս ձիու չի կարող լի-
նել այժմ կոլտնեսություն՝ վորպես սոցիալիստական
խոռոր տնեսություն: Առա ինչու համար ե, վոր դա-
սակարգային թշնամին—կուլակների հետևորդները
կատաղի վայրագությամբ հարձակվում են՝ կոլտնտե-
սային ձիուն վոչնչացնելու համար:

Կենտումի և ժողովուրդի փետրվարի 11-ի վո-
րոշումը, կոլտնտեսական հարվածայինների համախոր-
հրդային համագումարի դիմումը և կուսակցության
Յերկրկոմի վորոշումն աշխուժություն առաջ բերին
ակտիվ և ազնիվ կոլտնտեսականների մեջ՝ պայքարե-
լու կոլտնտեսային ձիու խնամքի, պաշտպանության
և բազմացնելու համար:

Տասնյակ հարյուրավոր լավագույն կոլտնտեսային
հարվածայիններ պաշտպան կանգնելով՝ կոլտնտեսային
ձիուն կուլակի թշնամական և նենգամիտ գործողու-
թյուններից, ցույց են տալիս չափազանց մեծ հոգա-
ցողություն, խնամք, ցավում են ձիու համար: Ձիու
ույժը—այդ մեր ույժն ե, այդ կոլտնտեսության ույժն
ու հարստությունն ե—ասում են կոլտնտեսական-
ները, կառուցանելով դաշտում ձիերի համար ախոռ:
Այդ հասարակ, անտաշ, հարդով ծածկված ախոռները
կառուցված դաշտերում, նախ ցույց են տալիս կոլտնտե-
սականների ուշագրությունը, հոգացողությունը խնա-
մելու դաշտում կոլտնտեսական ձիուն, ցրտից, քամուց,
յերկրորդ, վոր այդ հասարակ, անձաշակ ախոռները
համենայն դեպս պահում, պաշտպանում են ձիերին
ցրտերից, քամուց, անձրեից և տալիս են հանգիստ:

Ձիերը դաշտից դյուդ քշելը ջրի համար, բավական
մեծ ժամանակ և ույժ եին խլում ձիերից, հոգնեց-

նում եին նրանց, կոլտնտեսականները խորհում են և
խկույն ջրնոր են վորում դաշտում այդ ծանր աշ-
խ ատանքից ազատելով ձիուն:

Այդպիսի հոգացողության և խնամքի որինակները
կարելի յե գտնել և ամեն մի ռայոնում, սակայն ցափս
այն ե, վոր կուսազմակերպությունները կոլտն-
տեսությունների հարվածայինների այդ ձեռներեցու-
թյունները չեն գլխավորել, չեն կազմակերպել, ամրաց-
րել՝ զեկավարելու, շարունակելու, զարգացնելու համար:

Նրանք մոռացության եյին մատնել վոր ամրա-
կաղմ և կուշտ ձիու խնդիրը՝ դա զասակարգային
այժմեական խնդիր ե, նրանք մոռացել են կամ լավ
չեն հասկացել, վոր առողջ ձիու խնդիրը, նորմանների
կատարումը, դա այն կոլտնտեսականների մասին ե,
վորոնք հոգում են ձիերին և աշխատում են նրանց
հետ, նրանց պատասխանաւության մասին ե, դա
կոլտնտեսական ակտիվի գորահավաքի և նրանց գոր-
ծոն ու համերաշխ աշխատանքի մասին ե:

Հենց սրանով ե բացատրվում մի շարք ռայոննե-
րում ձիերի վատթար դրությունը, նորմանների չկա-
տարելը և գարնանացանի ժամկետերի վիճումը:

Մինչև որս վորոշ կոլտնտեսություններում ձին
գտնվում ե գեռես կուլակների, ծույլերի և վնասա-
բարների ձեռքում: Բերեզանսկի ստանիցայի «Պերվո-
յի մայտ» կոլտնտեսության առաջին բրիգադի ախոռա-
պետը, Շամբայ Գրիգորին տասը տարով դատապարտ-
ված, աքսորից վախած մի վնասարար եր: Կանևսկի
ռայոնի «Մտրանա սովետով» գյուղատեսական ար-
տելուս ախոռապահներն ու ձիերին ամբացրած կոլ-
տնտեսականներն ամեն շաբաթ փոփոխվում են, ձիե-
րը բոլորովին չեն մաքրվում, ժամանակին կեր ու
ջուր չի տրվում: Ցեյսկի ռայոնի Կամբշեատուկի ստա-

նիցայի յերկրորդ կոլտնտեսության մեջ ձիապաններն ու ամրացված կոլտնտեսականներն որերով չեն մոտենում ձիերին, չեն կերակրում, չեն ջրում։ Դիմազրկությունը և անպատասխանատվությունը ձիերը ինսամերու գործում հանդում են նրան, վոր Տիխորեցկի ռայոնի, «Պուտ կ սոցիալիզմու» կոլտնտեսության մեջ ութը ձիերի անկման գործում դժվար եր գտնել մեղավորին՝ պատասխանատվության յենթարկելու համար։

Յերկրողվարչության վորոշումը կրկին ու կրկին անգամ պահանջում է վերացնել պատահականությունը, դիմազրկությունը ձիապանների և ձիերին ամրացվող կոլտնտեսականների մեջ։

Ամեն 8—10 ձիերին պետք է նշանակվի ձիապան լավագույն կոլտնտեսականներից, անձնվեր, նվիրված կոլտնտեսային շինարարության, ստուգված կուլակային սաբուտաժի դեմ մղած պայքարում, առավելապես նախկին կարմիր բանակայիններից—նեծելագնտից։

Ամեն մի զույգ ձիուն պետք է ամրացնել պատասխանատու կոլտնտեսականի, վորը պետք է աշխատե և պատասխանատու լինի այդ մի զույգ ձիուն համար։

Աշխորերի հաշվառքը ձիապաններին պետք է հաշվել նորմը կատարելու չափից, իսկ ամրացված կոլտնտեսականներինը՝ ձիուն ինսամքի և պահպանության չափից։

Վորոշումը պահանջում է բոլցիկական կարգ սահմանել կոլտնտեսական ախոռներում և դաշտային թարուններում, կարգափորել իր ժամանակի պարտադիր մաքրումը, կերակրելը, կերի պատրաստումը և բաշխումը ամեն մի ձիուն առանձին և հատուկ ինսամքով։ Վորոշումը պահանջում է խիստ կոնտրոլ կազմակերպել նովելու պարտադիր կանոնների կատարելը, ընտրելով ամեն մի բրիգադում հասարակական վերահսկիչ։

Պայքարը կոլտնտեսային առողջ, ամրակազմ ձիունամար պահանջում է առանձին կուսկազմակերպություններից վերջ դնել քյալագլող ղեկավարության, պոռոտախոս և ճոճուան բանաձեռներին, և փոխելով ղեկավարության ձեր, ամելի գործոն դարձնել նրան, գործնականապես վճռելով կոլտնտեսային, ախոռային ձիերի ինսամքը և պահպանությունը ապահովող կըտրուի խնդիրները։

Կուսկազմակերպության և կոլտնտեսությունների հերթական խնդիրը նրանում է կայանում, վոր Յերկրհողվարչության վորոշման հիման վրա, ևս առավել ուժեղացնել և բարձրացնել նեղափոխական զգնությունը և ազնիվ ու լավագույն կոլտնտեսականների ինսամքն ու հոգացողությունը կոլտնտեսային ձիուն շուրջն, ընդգեմ անպատասխանատու աշխատանքի և կուլակային վնասաբարության։

Վոչ մի վնասաբար գեպք, ամպատասխանատու վերաբերմունք գեպի կոլտնտեսային ձիուն չպետք է մնա անպատիժ։

Միայն ամենորյա հոգացողությունը, կուսկազմակերպությունների լարված ուշադրությունը, կոլտնտեսային ակտիվի, հարվածայինների անձնվեր աշխատանքը և վերաբերմունքը ղեպի կոլտնտեսային ձին կարող են առաջ բերել թափերի բարձրացում, կարող են ապահովել կուլակային վնասաբարների գեմ տարգող պայքարի հաղթանակը, վորոշել ժամկետերի հաջող կատարումը և գարնանացանի վորակի բարձր չափերը։

«Զնայած կուսակցության և կառավարության անընդհատ ցուցմունքներին խորհանտեսությունների և կոլտնտեսությունների ձիերի խընամքի, պահպանման և ոգտագործման վճռական բարփոքման մասին, ընդգծված բեկումն այդ գործում գեռևս անբավարար ե»։ (ԽԾՄ-ի ժողկոմիսորնի և ՀԿԿ(բ) կենտկոմի վորոշմից):

Նպատակ ունենալով պահպանել և ճիշտ ոգտագործել կենդանի լծկանը, բարձրացնել կոլտնտեսությունների վարչության և կոլտնտեսականների անձնական պատասխանատվությունը, փորոնց հանձնվում ե խնամել, պահպանել և ոգտագործել ձիերը, սահմանվում են հետեւյալ հիմնական և պարտադիր կանոնները:

I. ԶԻԱՊԱՆԻ ՅԵՎ ԶԻԵՐԻՆ

ԱՄՐԱՑՎԱԾ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Յուրաքանչյուր 8 կամ 10 ձիու համար (վորոնց համար, ըստ հնարագորության հատկացվում ե կամ շինվում հատուկ կացարան) նշանակվում ե մի մշտական ձիապան։ Ձիապանն ամբողջովին պատասխանատու յե իրեն հանձնված ձիերի գրության և աշխատունակության համար։ Բացի այդ, ձիերն աշխատեցնելու համար ամեն մի զույգ ձիուն ամրացվում ե մշտական պատասխանատու մի կոլտնտեսական կամ կոլտնտեսուհի։

Ձիապանին և ամրացվող կոլտնտեսականին անձամբ ընտրում ե բրիգադիրը և հաստատում կոլտնտեսության վարչությունը։

Ձիապանն և ամեն մի զույգ ձիուն ամրացվող կարող են լինել միմիայն կոլտնտեսականներ կամ կոլ-

ՀԻՄՆԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԻԵՐԻ ԽՆԱՄՔԻ,

ՊԱՇՊԱՆՄԱՆ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հյուսիսային Կովկասի Յերկրագլառչուրյան
1933 թվի ապրիլի 18-ի վորոշումը, հաստա-
ված Յերկրցանեային կոմիտեյի կողմից։

Տրակտորի հետ համահավասար, ձին հանդիսանալով կոլտնտեսությունների հասարակական թանգարժեք սեփականությունը, վորոշում ե կոլտնտեսության հետագա կազմակերպչական-տնտեսական ամրապնդումը և առաջին հերթին գարնանացանի հաջող յելքը։

Պայքարը կոլտնտեսային առողջ, ամրակազմ ձիու համար կազմում ե դասակարգային կատաղի կովի մի բաժինը, կուլակը և վնասարարը կոլտնտեսության դեմ իրենց կովում փորձում են և փորձելու յեն նախ և առաջ հարփածել կոլտնտեսության կենդանի լծկանի ուժի քանակին ու զորակը, ինչպես անմիջական վնասարարությամբ, նույնպես և ձիերի խսամքի և ոգտագործման դիմազրկության միջոցով։

տնտեսութիներ, ստուգված կոլտնտեսության կազմակերպչական-տնտեսական ամրացման գործում և կոլտնտեսային սաբուտաժի դեմ տարած պայքարում և փորոնք ունեն բավարար փորձառություն ձիերի պահպանման, խնամքի և աշխատացնելու գործում:

Արգելվում են 16 տարեկանից ցածր ձիապան նըշանակել կամ կոլտնտեսականի ամրացնել ձիերին:

Զիապանն ու ձիերին ամրացված կոլտնտեսականները պարտավոր են իրենց հանձնված ձիերի հետ լինել վոչ պակաս՝ քան մի տարի:

2. Զիապանի սասին:

Զիապանի պարտականություններն են՝

ա) Զրի և կերի բերելը և նըանց կանոնավոր պահելը, կերի պատրաստելը և անասուններին կերակրելը սահմանված նորմայի համաձայն Խոտի հնձելը և արոտաեղի կազմակերպելն իր ձիերի համար:

բ) Զիերին ամրացված կոլտնտեսականների հետ միասին ձիերի կանոնավոր մաքրելը:

գ) Զիերի պահպանելը.

դ) Աշխատանքի համար ձիերի հանձնելը և հետ ստանալը ամրացված կոլտնտեսականներին, Զիապարքի ամրացնելը ձիերին, ձիասարքի հավաքելը և նորոգելը:

ե) Հսկել ձիերի առողջության և անասնաբուժի անմիջական ցուցմունքով կատարել ձիերը բուժելու հասարակ միջոցները: Սմբակի մաքրելը, որը յերկու անգամ ձիերի բերնի խոռոշների պարտադիր մաքրելը կերի մնացորդներից և փշերից:

զ) Զիերին հանգիստ տալու սահմանված կարգը պահելու համարելը:

ը) Իր ժամանակին գուգավորման կատարելը և առանձնահատուկ հոգացողություն մարդաների վերաբերմամբ:

թ) Ախտաբառան և դաշտային թարունների, ուր ձիերը պահվում են դաշտում, մաքրելը և մաքրության մեջ պահելը, ինչպես և ուրիշ նման միջոցների ձեռնարկելը, վորոնք կապահովեն կենդանի լծկանի բարգարկելուն և լավանալուն:

3. Զիապանի մի որվա աշխատանքը համարվում ե մի աշխոր (մի տարուց ավելի աշխատող ձիապանի մի որվա աշխատանքը համարվում ե 1,25 աշխոր):

Զիապանի աշխորի հաշվելը պետք ե շաղկապել նրա 10 ձի պահելու աշխատունակությունից, վորի համար ամեն մի 10 որվա ընթացքում ձիերի գրությունը բրիգադիրի կողմից քննվելուց, նորմաների կատարումը ստուգելուց հետո, բրիգադիրին իրավունք է տրվում ձիապանի ձիերին անփույթ վերաբերմունքի, բանվոր անասունի դրության վատանալու, ինչպես և նորմաները չկատարելու գեպքում տնպայման ձիապանի աշխորերից դուրս գրել մինչև 25 տոկոս՝ նրա 10 որվա ընթացքում շահած աշխատանքից:

Զիապանների առանձնապես աչքի ընկնող լավաշխատանքի համար, դեպի ձին ունեցած լավ վերաբերմունքի համար, բրիգադիրները ներկայացնում են այդպիսի ձիապաններին պարզեվատրման՝ կոլտնտեսությունում ընդունված ընդհանուր կարգով:

4. Զիերին ամրացված կոլտնտեսականների մասին:

Զիերին ամրացված և պատասխանատու կոլտնտեսականների պարտավորությունն ե՝

ա) Զգաստ վերաբերմունք իրեն հանձնված ձիերին, ամրացված կոլտնտեսականը կամ կոլտնտեսութիւնը պատասխանատու յեն ձիերն իր ժամանակին կերակրելու, ջուր տալու և սահմանված ժամանակին հանգիստ տալու համար:

բ) Զիերին ճիշտ ողբագործել աշխատանքի ժամանակ ձիերին չափից դուրս չըեռնավորել և հանձնարարված բոլոր աշխատանքների նորման լրիվ կատարել:

գ) Զիերի հիվանդության բոլոր դեպքում նախադպուշացնել ըրիվագորիրին:

դ) Զիերին ամեն որ կանոնավոր կերպով մաքրել:

ե) Աշխատանքի ժամանակ հսկել ձիասարքը պահպանելու:

5. Զիերին ամրացրած կոլտնտեսականի կամ կոլտնտեսունու աշխատանքը հաշվում են միմիայն նորմաները կատարելու չափի համաձայն և աշխատանքի գործադրածով գնահատված աշխորի համապապատասխան, ինչպես և կոլտնտեսականին հանձնված ձիերի վրա գործ դրած աշխատանքի քանակի և վրակի համապատասխան:

II. ԶԻԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ

ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԵԼԸ

6. Բրիգադում սահմանված կարգ ու կանոնի համաձայն ձիերի ամենորյա աշխատանքի հանձնելը և ընդունելը կատարվում է հետեւյալ պարտադիր կարգի համաձայն:

ա) Զիապանը ձիերին հանձնելով ամրացված կոլտնտեսականին, պարտավոր ե հայտնել նրան, թե յերբ և ինչպես ե կերակրվել և յերբ ե ջուր տվել,

բ) Զիապանը պարտավոր ե ստուգել ձիասարքը՝ ձին ընդունելու ժամանակ:

գ) Զիերին ամրացված կոլտնտեսականն, աշխատանքը վերջացնելուց հետո կամ աշխատանքի ընդմիջման,

հանգստի ժամանակ պարտավոր ե հայտնել ձիապանին, թե ինչ աշխատանք ե տարվել և ինչ չափով լարված ե ձիերի գրությունը աշխատանքից վերջը, ինչպես և յեղել հանգիստը, կերը և ջուր տալը (վերջինն այն գեպքում, յերբ աշխատանքը կատարվել ե թարունից հեռու մասնաբաժնում):

դ) Զիապանը ձիերին ընդունելու ժամանակ պարտավոր ե ուշադրությամբ զննել ձիերը՝ այստեղ և յեթ ամրացված կոլտնտեսականներին անելով իր նկատողությունները և ցուցմունքները ձիերի գրության մասին:

5. Զիապանը հանձնելով ձիերը ամրացված կոլտնտեսականին, պարտավոր ե ուշադրությամբ քննել ինքնտեսականին, պարտավորակի կամ արանսպորտի գրությունը, վորի վրա պիտի աշխատեն ձիերը, կարգավորելու նպատակով, վորպեսզի հեշտացնի ձիերի աշխատանքը և բարձրացնի աշխատանքի արտադրողականությունը (ինքնտեսականի յուղելը, ստուգումը և այլն):

8. Ամեն, յերեկո աշխատանքից վերջ ձիապանը պետք ե զեկուցե բրիգադիրին (կամ նրան փոխը թիմողին) իրեն հանձնված ձիերի գրության, ամրացված կոլտնտեսականների ձիերի հետ ունեցած վարդողության մասին, ձիասարքի մասին և այլն:

III. ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՅԵՎ ԶՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. Բրիգադիրը և ձիապանները պարտավոր են ապահովել բանվոր լծկանը կոպիտ և խտացած կերով: Կոպիտ կերը պետք ե ժամանակին բերվի ախոռատների մոտ կամ դաշտային աշխատանքների ժամանակ լծկանի կայանները և պահվի անվաս՝ ազատ վիչանալուց և հափշտակումից:

10. Եկրեկն աշխատանքի ժամանակ ձիերին պետք է կերակրել 3 անգամ, իսկ գիշերն անպայման 4 անգամ:

Կերակրելու կարգը մոռավորապես հետեւյալն է. յերեկոյան աշխատանքից հետո տրվում է առաջին ուժեղ կերը, յերկու ժամ հետո թեթև կեր, նորից յերկու ժամից հետ—նույնպիսի թեթև կեր և լուսաբացից առաջ տրվում է լրիվ ուժեղացրած կեր:

Աշխատանքներն սկսելուց հետո մոտ ժամի 9—10 մի ժամյա ընդմիջում և կերակրում, ժամի 12—13-ին յերկրորդ յերկժամյա ընդմիջում և կերակրում և ժամի 17—18-ին յերկրորդ մի ժամյա ընդմիջում և կերակրում:

11. Զիերին տրվող կուշտ կերը պետք է լիսի կոլտնտեսության մեջ յեղած պահեստի լավ տեսակներից (խոտը, հարդը, ծղոտը): Զղոտը պետք է անպայման կտրատված և խաշած լինի, հարդը նույն պես պետք է լավ տրորել, շաղախել և խաշել:

12. Խտացած կերը—թեփը, մեքենաղացների մնացորդները և խտակերը պետք է տալ վորպես խառնուրդ—շաղախ հարդի և ծղոտի հետ:

13. Յեզիպտացորենով կերակրելիս, վիրջինս անպայման պետք է մաքրել և ջարդել և վոչ մի դեպքում չտալ հատիկները ամբողջական ձևով:

14. Կերն անպայման պիտի տալ մսուրներում կամ կացարաններում, վորոնք հնարավորության չափ պետք է հարմարեցվեն ձիերին և առհասարակ բանվոր անասուններին պահելու և կերակրելու համար:

15. Հարդի և ծղոտի մեծ քանակությամբ կերի ժամանակ անպայման պետք է ամեն որ տալ ամեն մի անասունին 5—10 գրամ աղ:

16. Կերը տալիս խիստ կերպով պետք է պահել հետևյալ հաջորդական կարգը. սկզբում տալ կոշտ կեր, որինակ, խոտ, ծղոտ, չութեղ կերի հետմիասին և հատիկախառն, հետո պետք է ջրել և դրանից հետո տալ խտացրած կեր:

17. Զիերի փոխանցումը ձմեռվա կանգուն կացությունից կանաչ կերի, պետք է կատարել աստիճանաբար 7—8 որվա ընթացքում, վորպեսզի տեղի չտալ ստամոքսային հիվանդությունների և ձիերի աշխատունակության նվազելուն:

Առաջին որերը կոշտ կեր տալու ժամանակ (խս շած հարդ կամ ծղոտ) նըան պետք է խառնել մի յերկրորդ մաս կանաչ կեր՝ հաջորդ որերում աստիճանաբար ավելացնելով:

Զիերին դաշտում արոտի քշելու ժամանակ առաջին որերը պետք է արածացնել մի ժամից վոչ ավելի և որվա ընթացքում վոչ ավելի յերկու ժամ՝ աստիճանաբար ավելացնելով ժամը հաջորդ որերում:

Դաշտային լարված աշխատանքների ժամանակ, կանաչ խոտով կերակրելը վոչ մի գեպքում չի խանգարում 10-րդ կետում սահմանված կերի կարգը: Կանաչ խոտով կերակրելը, վորը շատ կարևոր է և ոգտակար ձիու համար, միայն վորքը ինչ կրծատում է կոշտ, չոր կերի չափը (հարդը), վորը տրվում է խտացած կերի հետ խառնելով:

18. Զիերը պետք է ջրել գարնանը և ամառը որական 4 անգամ, իսկ ձմեռը որական 3 անգամ: Թույլատրվում է միմիայն տալ մաքուր և լավ ջուր հատուկ տաշտերում կամ դույլերում, վորոնց ամեն որ պետք է մաքրել:

Թույլ չտալ վոր բրիգադի հանրական տաշտակից ոգտվեն կողմնակի ձիեր:

19. Զիերին ջուր պետք ե տալ կեր տալուց
15—20 ըսպե առաջ, իսկ վարսակը գարի և յեզի պ-
տացորեն տալուց մի ժամ առաջ:

Աշխատանքեց հետո ձիերին հանգիստ պահել ան-
պայման մի ժամ ու կես և հետո ջուր տալ:

IV. ՁԻԵՐԸ ՄԱԲՐԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՍՄԲԱԿՆԵՐՆ ՈՒ ԲԵՐԱՆԸ ԽՆԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20. Զիապահներն ամբացված կոլտնտեսականների
հետ ամեն տեղ և ամեն որ պարտավոր են մաքրել ձիերին
առավոտները կերակրելուց և աշխատանքի ուղարկե-
լուց առաջ: Ամառն արոտի ժամանակ ձիերը պետք ե
մաքրել աշխատանքի ուղարկելուց մի ժամ առաջ:

21. Ձիերը պետք ե մաքրել խողանակով կամ
թթած ծղոտե ժգուտով: Ձիերը պետք ե մաքրել
ախոռից և կացարանից դուրս, հատուկ պատրաստ-
ված ձիակապերում:

22. Արգելվում է ձիերին մաքրել կերակրելու ժա-
մանակ մսուրների մոտ:

23. Զիապահն ամեն որ պետք ե ստուգե ձիերի
սմբակները, բացի զրանից ամիսը մի անգամ բոլոր
ձիերի սմբակները պետք ե ստուգել և մաքրել:

Ձիերի քանակի համեմատ կոլտնտեսության վար-
չությունը նշանակում է առանձին փորձառու կոլ-
տնտեսականի, վորը և պատպախանատու պիտի լինի
ձիերի սմբակները կանոնավոր մաքրելու աշխատան-
քի համար:

24. Ձիերը մաքրելու և սմբակներն ստուգելու
աշխատանքի հետ ձիապահներն ու ամբացված կոլտնտե-
սականները պարտավոր են ամեն որ ստուգել ձիերի

ատամները, լեզուն և քիմքը. հիվանդության դեպքում
անմիջապես դիմել անասնաբուժին և ձեռք առնել
հարկ յեղած միջոցներ:

Նույնպես անհրաժեշտ է, վոր ձիապահներն ու
ամբացված կոլտնտեսականները հետևեն ձիերի ստա-
մոքսի դրության կանոնավոր լինելուն:

25. Զմեռը ինչպես և ամառը կոշտ հողային ճա-
նապահների վրա աշխատող ձիերի առաջի յերկու
վորքերը անպատճառ պետք ե պայտել: Ձիերը պայ-
տելու համար կոլտնտեսության վարչությունը նշա-
նակում է մասնագետ դարբին-պայտառ, վորին ամ-
րացնում են վորոշ քանակի ձիեր:


V. ԱԽՈՌՆԵՐԻ ՅԵՎ ՁԻԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

60847.67

26. Ախոռներում և գաշտային կացարաններում
պետք է լինի որինակելի կարգ: Կարգ ու մաքրու-
թյունը պահպանելու համար պատասխանատու յե
ձիապահնը:

27. Այն գեպքում, յերբ բրիգադն իր ժամանա-
կին չի ապահովել ձիերի ամառվա կայանները, ան-
հրաժեշտ է (բրիգադիրի անձնական պատասխա-
նատությամբ) դաշտում ձիերի համար կառուցել
մշտական ախոռատներ, ապաստաններ կամ ծած-
կոցներ հասարակ միջոցներով (յեղեգնից, ծղնոտից
և այլն):

28. Ինչպես ախոռատնում, նույնպես և ամառվա
կացարաններում ամեն մի զույգ ձին պետք ե ունե-
նա մշտական սարքոց, վորի վրա կախված պիտի լինի
ցուցակի վրա ձիու համարը և անունը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՍՀՄ ԳԱՅԱՆ
ԽՈՐԴԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՆ
ԲՈՒԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՅԱՆ

29. Ախոռատնում և ամառվա կայարանում բանուկ ձիերը պետք ե մի փորոշ տեղ ունենան՝ սպասարկվելով մի ձիապանով:

30. Հղի մադյաններն ախոռատներում պետք ե ունենան ավելի կալուն սարքոցներ, իսկ ամառային կայաններում անպատճառ շարժական ձողերից պատրաստված միջապատեր, փորը կառանձնացնի նրանց մյուս ձիերից, փորպեսզի չվասպեն կամ չըվիժեն:

31. Ձիերին աշխատանքի ուղարկելուց հետո, ձիապանը պարտավոր ե մաքրել սարքոցներն աղբից, աթարից, գուրս տանելով նրանց ախոռից:

Դաշտում, թարուններում, դաշտային աշխատանքների ժամանակ, ձիապանները պարտավոր են սիստեմատիկ ւերպով՝ մաքրել կացարաններն աղբից, աթարից:

32. Սարքոցներում, դաշտում, թարուններում ձիերի կանգնելու տեղը ամեն որ պետք ե հավասարացնել, տափանել փոսերը, կոշերը և փոխել խոնավ հողը:

Ախոռների հատակը պետք ե կավով կամ փափուկ փայտով ծածկել. միանգամայն արգելվում ե ցեմենտի և աղյուսի հատակներ շինել:

VI. ԶԻԵՐԻՆ ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

33. Բրիգադի բոյոր ձիերն անպայման պետք ե զույգերի բաժանվեն՝ հետեյալ պայմանների և նշանների հաշվառու մով.

ա) Առանձին զույգ են կազմում ձիերը հավասարույթի, յեռանդի և լծասարքով իրար սովոր (և վոչ ըստ գույնի):

բ) Հղի մադյաններն ըստ հղիության ժամկետերի պետք ե ջոկվեն առանձին զույգերի:

գ) Առաջին անգամ աշխատանքի լծվող բանուկ քուռակները պետք ե ջոկվեն առանձին զույգերի:

34. Կարգավիր պլանը կազմելու ժամանակը փորոշելու համար ձիերի աշխատանքը, պետք ե հաշվի առնել բանուկ ձիերի ոգտագործումն ըստ նրանց վիճակի:

Հղի մադյանները և առաջին անգամ աշխատանքի լծվող քուռակները պիտի անպայման ոգտագործվեն թեթև աշխատանքներում:

35. Բոլոր հղի մադյանները ծնելուց յերկու ամիս առաջ պետք ե անպայման ազատվեն ծանր աշխատանքներից և ծնելուց հետո մի ամիս ազատ լինեն աշխատանքից: Հղիացվող մադյաններն իսկույն և յեթ պետք ե ուղարկվեն զուգավորման և պետք ե ազատ լինեն աշխատանքից:

36. Լծկան զույգով աշխատելու ժամանակ (աըրանսպորտի, տափանելու, դաշտերը մոլախոտերից մաքրելու) ձիերին ղեկավարում ե միմիայն ամրացված կոլտնտեսականը կամ կոլտնտեսունին. արգելվում ե վոչ մի գեպում բանվոր ձիերը չնանձնել կողմնակի անձնավորության: Բացառիկ գեպերում (հիվանդություն) ժամանակավոր կամ մշտական փոխամրացումը կատարում ե բրիգադիրը՝ ձիապանի ներկայությամբ և ձիերը հանձնվում են նոր ամրացված կոլտնտեսականին, գրի անցնելով ցուցակում ձիերի փորպիսությունը:

37. Քառածի աշխատանքների ժամանակ (վարցանք) յերկու ամրացված կոլտնտեսականներն անպայման պետք ե լինեն իրենց ձիերի հետ:

Յանքություն։ Քառածի աշխատանքների ժամանակ կարելի յէ թույլադրել ժամանակավորապես աշխատանքի, միայն անպատճառ մի հասակավորի հետ, ամրացված կոլտնտեսականի փոխարեն յերկրորդ զույգին նրա ընտանիքի անչափահասին, իրեն ոգտագործելով ավելի պատասխանատու աշխատանքի նույն բրիգագում։

38. Միածի աշխատանքի ժամանակ (կուլտիվատորի վրա) մի ձիու հետ աշխատում ե ինքը՝ ամրացված կոլտնտեսականը, յերկրորդ ձին կարող ե աշխատել մի ուրիշ կուլտիվատորի վրա նույն հողաբաժնում, միայն այդ ձիու հետ աշխատող կոլտնտեսականը պետք ե հրավիրվի ձիերին ամրացված կոլտնտեսականի հավանությամբ։

VII. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

39. Բրիգագի բոլոր ձիերը տասնորյակը մի անգամ պարտադիր կերպով յենթարկվում են անասնաբուժական ստուգման։

Ամեն բրիգագում բրիգագին պետք ե ունենակինդանի լծկանի ժուրնալ—ցուցագիրը։ Անասնաբուժական քննության հետևանքները և ցուցմունքները գրի յեն անցկացվում այդ ժուրնալի մեջ։

40. Զիապանները պարտավոր են որական յերկու անգամ նայել և մաքրել ձիու բերանը։ Ստամոքսով հիգանդ ձիերին ջոկել կերի ժամանակ և ապահովել նրանց համար առաջի հերթին փափուկ նյութահեղ և լավ կեր։ Վորպես դարձան կերի հետ խառն տալ փոքր քսնակությամբ լուծող աղ և առավոտյան ու զիշերվա կերակրելուց հետ բերանը լվալ ափատահան լուծույթով (մարգանեց, կրեոլին) և անասնաբուժի

ցուցմունքով աղով շփել։ Զիապաններն ու ամրացված կոլտնտեսականները պետք ե հսկեն ձիերի ստամոքսով դրության՝ նրա արտաքիննշաններով (ախորժակը, ուռուցք, աղը, ցավեր) և ամեն նկատած աննորմալության մասին խսույն հայտնել անասնաբուժին։

41. Բրիգագի բոլոր նորեկ ձիերը պետք ե յենթարկվեն անասնաբուժական ստուգման և անկախ նրանց առողջական դրությունից, պետք ե 10 որ առանձին պահվեն բրիգագի ձիերից։ Բոլոր յեկվոր ձիերը (գյուղաբորհրդից ռայոնից և այլն) պետք ե առանձին պահվեն բրիգագի ձիերից։

42. Յերկու ամիսը մի անգամ ախոռները պետք ե ախտահանել՝ ճերմակացնելով կրով։

43. Բոլոր ձիերը, վորոնցում անասնաբուժական ըննությամբ գտնվել են վարակիչ հիվանդության նշաններ, անմիջապես պետք ե առանձնացվեն առանձին ախոռներում կամ թարոններում, առանձին կացարաններում (իզոլյատոր)։ Անհրաժեշտ ե ամեն կոլտնտեսության մեջ կազմակերպել սարքավորված իզոլյատոր։

44. Արգելվում ե աշխատացնել հարված ուսերով ու բաշով ձիերին։ Ուսերի և բաշի հարվածի համար ամեն առանձին դեպքում խիստ պատասխանատվության պետք ե յենթարկել ձիապանին և ամրացված կոլտնտեսականին, վորոնք պատասխանատու յեն լծասարքի վատ դրության համար։

VIII. ՔՈՒՌԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

45. Քուռակամայրերի աշխատանքի ժամանակ առաջին յերկու ամիսները պետք ե ընդմիջումներ անել քուռակներին կերակրելու համար։ Քուռակների

գին պետք ե թույլ տալ մոտենալու մայրերին առաջին յերկու ամիսը յուրաքանչյուր ժամը մի անգամ, այսուհետև 2—3 ժամը մի անգամ:

46. Քուռակներին պահպանելու նպատակով, թույլ շտալ ոգտագործելու մայրերին՝ լծելու համար հնձիշին կամ լաբողբեկային:

47. Քուռակներին մոր կերից կտրելը պետք ե կատարել 6 ամսական հասակում և անասնաբուժի թույլ-ոտքությամբ: Մոր կերից կտրած քուռակներին խնամելու համար նշանակվում են լավագույն կոլտնտեսականները, ամրացնելով նրանց 15—20 քուռակների: Քուռակներին ամրացրած կոլտնտեսականների պարտականությունն ե քուռակներին կանոնավոր խնամք տանել և պահպանել, նրանք պատասխանատու յեն քուռակների ապահով և առողջ զարգացման համար:

48. Քուռակները լավ խնամելու, նրանց 6 ամսվա ընթացքում սնուցման և առողջ կացության համար ձիապաններն ու ամրացված կոլտնտեսականները պարզեատրվում են լրացուցիչ աշխորերով—ձիապաննը 10 աշխորով, իսկ ամրացված կոլտնտեսականը 15 աշխորով:

IX. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

49. Ձիապանի և ձիերին ամրացված կոլտնտեսականի պատվավոր և պատասխանատու աշխատանքը չի կարելի հանձնել ամեն մի պատահական կոլտնտեսականին: Այդ պատասխանատու զործը կարելի յե վրատահանալ մի միայն այս կոլտնտեսականներն, զորոնք իրենց աւճնվեր և տոկուն աշխատանքով ապացուցել են իրենց անձնվիրությունը կոլտնտեսային շինարա-

զության,—առաջին հերթին նախկին կարմիր բանակային կավալերիստներին և բ. գ. կ. բանակի փոփոխակիներին:

50. Ձիերի կերի, խնամքի և ոգտագործման համար սահմանված պարտադիր կանոնների խախտման ամեն մի առանձին դեպքը պետք ե քննվի կոլտնտեսականների կողմից բրիգադի ընդհանուր ժողովում: Կանոնների խախտման և ձիու հանդեպ ունեցած անփույթ վերաբերմունքի վոչ մի դեպք չակետը ե խուսափի կոլտնտեսականների ուշադրությունից:

Ամեն մի բրիգադում, բրիգադի ընդհանուր ժողովի վրոշմամբ, լավագույն կոլտնտեսականներից (նախկին կավալերիստներից և փոփոխակիներից) պետք ե ընտրել շասարակական վերահսկիչ կոլտնտեսական՝ ձիու խնամքի, պահպանման և ոգտագործման գործը քննարկելու համար:

51. Ձիերին վատ խնամք տանելու համար, վչացնելու և վնասելու դեպքում, նույնպես և աշխատավորական դիսցիպլինան խախտելու համար, ձիապաններն ու ամրացված կոլտնտեսականները խիստ պատասխանատվության յեն յենթարկվում: Վատ խնամքի, վնասի և վչացման համար հանցավորները պետք ե անինա պատժվեն հասարակական սեփականության պահպանման որենքի հիման վրա:

Ձիերի անկման ամեն մի պատահարի համար, բրիգադիրը պետք ե ակտ կազմի և գործը տա դատարանի քննության՝ հանցավոր ձիապանին կամ ամրացված կոլտնտեսականին պատասխանատվության յենթարկելու:

52. Ձիերին ամրացված կոլտնտեսականի և ձիապանի անհարգելի պատճառով աշխատանքի չելնելու դեպքում, բրիգադիրը պարտավոր ե առաջին անգամ

տուգաննել նրան՝ պակասեցնելով հ աշխոր, իսկ յերկը բորդ անգամ աշխատավորական դիսցիպլինան խախտելու գեղքում դուրս փարեել կոլտնտեսությունից:

53. Կոլտնտեսությունների վարչությունները և բրիգադիրները պատասխանատու են կոլտնտեսություններում կոլտնտեսականների մեջ այս պարտադիր կանոնների յուրացման համար:

Ռայհողբաժինը պարտավոր ե նրանց յենթարկել խիստ պատասխանատվության՝ առաջի անփույթ վերաբերմունքի և միջոցներ ձեռք չառնելու բանվոր լծկանի գրությունը բարվոքելու համար:

54. Ռայհողբաժինների, ՄՏ կայանների վարչության և նրանց քաղբաժինների աշխատանքի կարեոր խողիրը պիտի լինի կոլտնտեսություններում կոլտնտեսականների մեջ յուրացնել տալու և արմատացնելու կոլտնտեսային ձիերի խնամքի, կերի պահպանման և ոգտագործման վերաբերյալ հիմնական և պարտադիր կանոնները:



21. 961

ԳԻՐ
Цена 15 գլր.
коп.

20812-

Ա. Բ. 1
ՏԵՂ
ՑՄ 0



На армянском языке

ОБ ОСНОВНЫХ ОБЯЗАТЕЛЬНЫХ ПРАВИЛАХ
ПО УХОДУ, СОДЕРЖАНИЮ И ИСПОЛЬЗОВА-
НИЮ ЛОШАДИ В КОЛХОЗАХ

Постановление коллегии Северо-Кавказского Краевого
Земельного Управления от 18 апреля 1933 года, утвр-
денное Краевым комитетом по весеннему севу.

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՊՈՍՏՈՎ-ԴՈՒ ՄՈՒԿՈՎԻՉՎԱՆ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՐՊՈՒՏԵՐ)